

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գ . Ե շ ա բ հ ե տ ի ս ե ր բ ո ր դ ր տ դ ա ր :

ՓՈԹՈՐԿԻՆ ՎԵՐԾԸ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿՐ ՄԻՔԻ . ասանկ ալ ԵՐԿԻՒՍ այնչափ տակն ու վրայ ըլլալէն ԵՄՔՐ՝ կամաց կամաց հանդարտեցաւ , տիեզերաց նախնական բնութիւնը փոխուեցաւ , բոյսերը սկսան առաջ ԵՐԾԱԼ ու շատնալ . վասն զի առաջ միայն քանի մը տեսակ պարզ կազմուածք ունեցող բայսեր կային , ինչպէս են անկուտք և միակուտք : ԼՐԿՐԻՍ ՆԵՐՔԻՆ ՋԵՐՄՈՒԹԵՆ առաջ եկած տաքութիւնը՝ չորս կողմը հաւասար տարածուեցաւ ամէն տեղ , և սկսան բոյսերը առաջ գալ , թէպէտ և ԵՐԿՐԻՍ վրայէն ածխային մասունքը պակսելով՝ անոնց ալ մնունդը քիցաւ և առջններուն համեմատ սկրսան պղտիկնալ , քանի մը կրկնակուտքոյսեր ԵՐԿԵցան :

Ըայց բոյսերէն աւելի զարմանալի էին ան ատենուան կենդանիներն . որոնց թէպէտ և ստոյգ պատկերը չունինք , բայց ինչպէս որ իրենց բրածոյ նշխարքներէն կը գուշակենք , զանազան տգեղ ձեւեր իրարու հետ համեմատ կերպով մը միանալով , այն զարմանալի և աչագին արարածներն ստեղծուեցան : Լախ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՋԵՐՈՒՆ մէջ , ծովեղերքը , լճերուն , անտառներուն ու օդուն մէջ սողուններ ԵՐԿԵցան : ՈՒԵԿ տեղ մը , ԵՐԵՍՈՒՆ ոտք ԵՐԿԱՅՆ ԼՐԿՈՐԴԻԼՈՍԻ նման Ձկնամողէզը² , որ Լավիալի³ նման պղտիկ կոկորդիլոսներ

1 Ընդհանուր իրեք խումբ կը բաժնուին բոլոր բոյսերը , իրենց հունտէն առնուած . որոնց հունտն որ Երկու կուտ (Cothylédon) կը բաժնուի՝ ԿՐԻՆ-ՀԵՐ կ'ըսուին (Dicothylédon) և ասոնք են բուսոց մեծ մասը . իսկ որոնց որ կուտը չբաժնուիր՝ ՄԻ-ՀԻ-Չ+ կ'ըսուին (Monocothylédon.) իսկ որոնք որ բնաւ կուտ կամ հունտ չունին՝ ԱՀԻ-Չ (Aco-thylédon) կ'ըսուին : Անկուտները ամենէն պարզ և անկատար բոյսերն են , Կրկնակուտները՝ ամենէն կատարեալ :

2 Icthyosaure.

3 Gavial կ'ըսուին ԵՐԿԱՅՆ ացուուկ ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐՈՒ տեսակներ :

Կ'որսար , ու անոնցմնով կ'ապրէր . ուրիշ տեղ մը 30 ոտք ԵՐԿԱՅՆ ութեամբ ահագին մողեզներ՝ բոլոր թեփով ծածկած , լայն պոչովը ՈՎԿԻԱՆ ոսխին ջրերը կը պատուտէին . կղզիներուն մէջ ՈՒԵ-ԾԱՄՈՂԵզը⁴ որ Եօթանասուն ոտք տեղ կը բռնէ , գետեղերքը բարձրավիզ մողեզ մը որ զլուխը տնկած ատեն ամէն եղեգնուատներէն վեր կ'անցնէր , վիզը օձի վզին պէս կակուղ , մարմինը հաստ , և 20 ոտք ԵՐԿԱՅՆ ութիւն ունէր :

() զուն մէջ մատնաթե՝ վիշապանման զեռուններ կը շարժէին թևաւոր մողեզներ որ չզջկան պէս թեւեր ունէին . թեփամորթ չորս ոտքով թռչուններ որ Երբեմն զետնի վրայ կը սողային , Երբեմն ալ ծառերուն վրայ կը ցատքըտէին :

ԼՐԿԵԱԿԱՅԵԿԱՔ մէկ մը ԵՐԿՐԻՍ ԵՐՐՈՐԴ դարը . հիմակուան ՈՎԿԻԱՆ ոսխին աւելի ընդարձակ ծով մը որուն փրփրային ալիքները՝ ցամաք ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ եղերքը կը զարնուին , բազմաթիւ մանր կղզիներ զառ ՚ի վայր լեռներ որոնց գագաթունքը կամ կանաչ խոտով պատած և կամ մերկ էին . ուր մըրիկներ , կայծակներ ստէպ կը գոռային ահեղաձայն և անյագ լեխաթաններ՝ միակերպ պատերազմի մէջ ծովուն ալիքները իրենց արիւնովը կը ներկէին ու անոնց սաստիկ ձախնէն բոլոր անստառները կը թընդային : ԼՐԿՐԻՍ բեեռներուն և հասարակածին վրայ մթնոլորտը ելեքտրական շողիներով լեցուն էր . օդը մըրիկներու ու կայծակներու թատր էր եղած . ԵՐԿԻՐՍ իր միջի կրակներուն շարժմունքէն կը սարակը , կղզիները այն սաստիկ ցնցմունքներէն վայրկենէ վայրկեան ձեւերնին կը փոխէին և կարծես թէ բոլոր վրանին եղած բնակիչներովը պիտի ջնջուէին ու անհետանային :

ՎԱՅԱՓԻՍԻ խառնաբնուդոր և ահաւոր

1 ՔԵՐԱԿԱՆ+ԷՒՏ :

2 Mégalaosure.

3 Pterodactyles , որոնք ԵՐԿԱՅՆ մատուցներ ունէին չզիկանց պէս մաշկով պատած :

4 Ամենամեծ կէտ ձուկ որ սուրբ գերքը կը միշէ :

տեսարան մը կը տիրէր ան նախնական
և վայրենական բնութեանը վրայ :

Հոս տեղը բանասիրաց միանգամայն
և բնախօսաց հետաքննութեան նիւթ
մը տանք , թէ որ բոլորովին չեն մեր-
ժեր մեր առաջարկութիւնը , որն որ
կարծեմ բնաւ չեն յիշած երկրաբանք
երկրիս այս հին և ծածուկ վիճակնե-
րուն վրայօք խօսած ատեննին . որոնց
վրայ անկարելի էր տեղեկութիւն ու-
նենալ , բայց եթէ աստուածային յայտ-
նութեամբ , կամ աւելի մանր և խոր
երկրագիտական և աստղաբաշխական
քննութեամբ : Խրկրիս կազմուածքը
զրեթէ զրական ստուգութեամբ կը
ցուցընէ որ մեր գիտցած պատմական
ժամանակներէն հին է , և թէ անշուշտ
Ոովսիսի վեցօրեայ արարչութիւնը վեց
դարու արարչութիւն իմանալու է՝ ո-
րոնց ժամանակը անորոշ , և մէկ օր մը
կ'ըսուին , աստուածային չսփով մը չա-
փելով՝ որուն դիմացը “ Հազար ամի՞-
” ըրև զօր երեկի՝ զի էանց „ . ինչպէս
ասոր հակառակ ալ արտաքին ազգաց
ունաց ամենէն հին պատմիչները՝ օրուան
տարի կ'ըսեն . ասանկ իմանալու է
Քաղզէացւոց բիւրաւոր տարիները :
Ոովսէս մարդարէն աս երկրաբանական
դարերը իրաւամբ հարկաւոր չել սեպեր
մեզի ըսելու , որովհետեւ աւելի մեզի
մօտ բաներն ալ լրեց . իսկ արտաքին
պատմչաց մէջ ամեննեին ասանկ բանէ-
րու յիշատակութիւն չկայ . և թէ ափէտ
ամէն ազգ մէկմէկ կերպ ստեղծագոր-
ծութեան պատմութիւն ունին , բայց
լի են առասպելաբանութեամբ : Ոա-
կայն ասոնց մէջ շշմարտագոյն և հին
պատմութիւն մը փնտուելու ըլլանք ,
միայն Քաղզէացւոց կրնանք վստահիլ
որոնցմէ Ոովսէս ալ իրմով չէնէ՝ զոնէ
Քարահամայ ձեռքով , տեղեկութիւն-
ներ առած է . և ասոնք միայն են որ
Քրիստոսէ առաջ 2200 տարուընէ վեր
ստոյդ աստղաբաշխական զննութիւն-
ներ ունեին : Ասոնց պատմիչներն ալ
կորած են , միայն ունանց մէկ երկու

Հատուկտիր զրուածները կամ Քովսէ-
պոսի , Խւսեթիոսի , Խորենացւոյ , Վիւն-
կելոսի և ուրիշ սակաւուց քով . ասոնց
մէջ զրեթէ բոլոր արտաքին Շիոյ պատ-
մչաց պատմահայր եղած է Շերոսոս
կամ Շիւռոս , ուսկից վկացութի՞ կ'առ-
նուն Շքիւդենոս , Պաղեփատոս , Շ-
զեքսանդր Շազմավէպ և ուրիշ հին և
նոյնպէս կորած պատմիչներ , և շատ
մէծ համարմունք ունին անոր վրայ ,
ինչպէս մենք Խորենացւոյն . բայց չէ
միայն անսնք այլ և Քովսէպոս Հրեայն
շատ կը գտիլ իբր շշմարտապատում և
բազմահմուտ , նոյնպէս Խւսեթիոս , և
ուրիշ Հարք ալ . մէկ խօսքով արևե-
լեաց մէջ ասոր պէս յարգի պատմիչ մը
չեն ցուցըցած մեզի վերոյիշեալ Հարք
և պատմիչք :

Լոյս պատմիչս միայն , առաջին ան-
գամ կը համարձակինք ըսելու , կ'երե-
նայ թէ վերը դրած երկրիս երրորդ գա-
րուն յիշատակ մը կուտայ՝ առասապելա-
խառն , կամ ինչպէս ինքը կ'ըսէ Այլա-
բանական կերպով մը . ինքն ալ հնա-
գոյն և ամենահին զբքերէ հաներ է ը-
սածը , որոնք մէծ զգուշաւթեամբ կը
պահուեին կ'ըսէ Շաբելնի մէջ : Քադ
ասիկայ իր պատմութեան Ա զրոյ մէջ
կը պատմէ , թէ ատեն մը եղած է որ
երկրիս երեսը բոլոր խաւար ու ջուր
էր , ինչպէս Ոովսէս ալ կ'ըսէ . ան ա-
տեն միայն գազաններ կային , բայց հի-
մակուաններուն աննման . ինչպէս՝ եր-
կու թեռվ , զրա թեռվ մարդոց նման ,
երկու գլխովներ , ձիացուներ , յուշկա-
պարիկներ , ձիագլուխ կենդանիներ ձը-
կան պոչով , մէծամեծ օձեր , և այլն .
որոնց շատին Քունաց առասպելեաց
կենդանիներուն նմանութիւնը կուտայ .
աս ամենուն վրայ՝ Ոարկայէ կամ ըստ
Յօյն օրինակաց Ոմոքքա ըսուած կին
մը կ'իշնէր , կ'ըսէ , որ Քաղզէարէն
ծով կը թարգմանուի . հայերէն ալ ա-
ւելի լաւ ստուգաբանութիւն կընանք
հանել Ոառ կամ Ոօր և կայտ բառե-
րէն , որ մթան և ջրին տեղերուն վիճա-
կը կը յայտնեն . Շէլ որ է Շատուած ,
աս կինը երկու կտոր ըրաւ , կէսը եր-

կինք՝ կեսը երկիր շինեց . որ ըստ Ո՞վկամի թագից կամքառին բաժանումն և հաստատութիւնն է . Այս բաներս կ'ըսէ սլատմիզը , այլաբանութեամբ կը նշանակեն թէ քանի որ մութ ու ջուր էր՝ միայն գաղաններ կային . և երբոր Ի՞ւլ (Աստուած) խաւարը բաժնեց ըստ ընելով , ու երկինք և երկիր երևան եւ լան՝ գաղանները չկրնալով լուսոյն դիմանալ՝ սատկեցան :

Դիա այս ըսածներէն երկու բան յայտնի կ'երևնայ , նախ որ Ո՞վկամի նման կը վկայէ թէ ՚ի սկզբանէ խաւար ու ջուր ու խառնակութիւն էր . երկրորդ թէ այն վիճակին մէջ՝ այլանդակ կենդանիներ կային երկրիս վրայ , որոնք չըիշեր Ո՞վկէս : Խակ թէ ՚Քաղդէացիք ուսկից գիտցան աս բանս , նոյն Ե՞րոսուսէն կը գուշակենք՝ որ ջրհեղեղէն առաջ աս բանս իմացուած էր , թերեւ Ծամբէր առջի իմացողը և իմացրնողը . Դրա ալ իր կամ իրմէ առջիններէն առած աւանդութիւններովը աս բանիս յիշատակն ալ թողուց Հայաստանի բնակչաց . ազգաց ցրուելուն ատեն՝ Ի՞ւլ բոնաւորը յափշտակեց աս աւանդութեան զբքերուն մէկ մասը և ՚Քարելսն տարաւ . անկէ մնաց ՚Քաղդէացւոց մէջ աս աւանդութիւնս ալ . որուն առաջին պատմողը ջրհեղեղէն առաջ էր Հովան անունով մէկը՝ որն որ ՚Երոսոս գաղան մ'էր կ'ըսէ Լարմիր ծովէ մը ելած , որ մարդկանց օրէնք և գիտութիւն սորվեց . աս Հովանը՝ ինչպէս կ'երևնայ զրեց ջրհեղեղէն առջի տասը ազգին պատմութիւնը՝ ինչուան եօթներորդինը , այսինքն Ծամբէն ինչուան ՚Նովք , թէ որ ՚Երոսոսին տասը թագաւորներն ալ՝ որ ՚Ծալվրոսէն կը սկսին՝ սեպէնք Ո՞վկամի տասը ազգը ինչպէս ՚Նուերիս և ՚Նորենացի ալ կը սեպեն . կրնանք կարծել՝ թէ աս Հովանն ալ ինքն իսկ ՚Նովքը ըլլայ . ՚Նօթներորդն ՚Նամանյ , որուն համար հասարակաց կարծիք է սրբոյն Հուգայի թղթէն առած՝ թէ զիրք զրած էր և ջրհեղեղէն ալ ասդիս անցաւ . որովհետև ՚Երոսոս ալ միայն եօթը ազգին պատմու-

թեանք համար կ'ըսէ Հովանէն առնուած :

Ո՞ւրյիշելիքը միայն երկրաբանական նիւթին վրայ ըլլալով , չենք ուզեր հոսանքէ գուրս եղած պատմական բաները քննել , որոնք իբրև կարծիք միայն դըրինք՝ ոմանց հաւանած ըլլալով և ոմանց ոչ :

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԴՐԱՆԻ բանքի Հայ զանազան Գիտէլիքներ :

ԴՐԱՆՐԱՉԱՓ մը աղէկ շինուած կը համարուի , մէյմը երբոր մնդիկին մէջ ամենեին օդոյ պղպջակ չերեւի . երկրորդ երբ ծանրաչափը ծուելու որ ըլլաս՝ մնդիկին սիւնակը համնի ինչուան անոր գագաթը , ու զարնելով Ճայթիւն մը հանէ : Լյրեմն կը պատահի որ ծանրաչափական դատարկութեան մէջ քիչ մը խոնաւութիւն մնացած կ'ըլլայ , որ շոգի գառնալով կը Ճնշէ վերէն գէպ ՚ի վար՝ մնդիկին սիւնակը , որով աստիճաններուն ցուցմունքները պակասաւոր կ'ըլլան : ՚Ա խոնաւութիւնը թէ որ խիստ քիչ է՝ անզգալի կ'ըլլայ , որով չՃնշցուիր ծանրաչափ գործւոյն կատարելութիւնը . միայն ուրիշ կատարեալ ծանրաչափի մը հետ բաղդատելով՝ կը նանք անոր աղէկութիւնն ալ իմանալ :

Լյրոր հարկ ըլլայ ծանրաչափ մը տեղէ տեղ փոխադրել , պէտք է զգուշանալ , որ չըլլայ թէ ծանրաչափական դատարկութեան մէջ օդ փախչի : ՚Ա բանիս համար պէտք է գործին կամաց կամաց ծուել որ մէջի մնդիկը եղէզին զիսի կողմը ամբովը լեցուի . աս զիրքով բռնած կրնայ ուր որ պէտք է նէ տարուիլ , առանց ամենեին վախ ունենալու որ եղէզին մէջ օդ փախչի : ՚Ու որ ծանրաչափը կոր թեւ ունենայ , կրնայ բռնդովին զիսիվար դարձուիլ , նախ գնտին կամ զլանին վրայի պղտի ծակը գոցելով , որպէս զի աւելորդ մնդիկը դուրս չվազէ , և այսպէս եղէզը ծայրի